Իր թերություններով հանդերձ այնուամենայնիվ մահալական մելիքության կատարած դերն այդ երկու քսանամյակներում այնքան նշանավոր և կարևոր էր, որ երբ սենատոր Հանի մշակած օրենքի գործադրությունն ակնբախ կերպով ապացուցեց նրա հիմնական ելակետների սխալ և վնասակար լինելը, կառավարող շրջաններում լուրջ քննության դրվեց այն հարցը՝ թե արդյո՞ք նպատակահարմար չէ վերականգնել մահալական մելիքական իրավասությունը և այդ ճանապարհով ռուսական վարչական կառուցվածքը հարմարեցնել ժողովրդին հասկանալի, հարազատ, հեղինակություն ձեռք բերած ավանդական սովորություններին։ Այդ ձգտումով էր թելադրված 1843 թ. սեպտեմբերի 27-ի օրենքը, որի երկու հոդվածներով առաջարկվում էր զասեղատելներին կից հիմնել օգնականների պաշտոններ և այդ պաշտոնները կատարելու համար ներգրավել տեղական մելիքներից, բեկերից, աղալարներից ազդեցիկ մարդկանց, նույնպես աշխատել այդ հասարակական շերտից շատերին կարգել գյուղական համայնքներում ֆոխվա, տանուտէր, գյուղական մելիք։

ՍԵՆԱՏՈՐ ՀԱՆԻ ՕՐԵՆՔԻՑ ՀԵՏՈ

Սենատոր Հանը և իր աշխատակիցները շտապեցին հաղորդել Նիկոլայ I կայսեր, որ 1840 թ. հաստատված օրենքի համաձայն արդեն ամեն տեղ, թե՛ վրացական, և թե՛ մուսուլմանական գավառներում վարչական հին ապարատը վերացված է և 1841 թ. հունվարի 1-ից գործելու է նոր վարչական ապարատ։ Շուտով, սակայն, սկսեցին Պետերբուրգ հասնել տեղեկություններ, որ կուլտուրական շատ տարբեր աստիճանների վրա կանգնած, անցյալից երբեմն չափազանց իրարից զանազանվող իրավահասկացողություն ժառանգած, բազմալեզու և բազմակրոն անդրկովկասյան ժողովուրդների համար այդ օրենքի հիմնական կետերը խորթ են և անյուրացնելի և որ դժգոհությունն օրեցօր դրսևորվում է ավելի և ավելի սուր բռնկումներով։ Կայսրը զայրացած էր, քանի որ Հանին ինքը որոշ ցուցմունքներ էր տվել, որ օրենքը մշակելիս անպայմանորեն հաշվի առնվեն առանձին տեղերում գործադրվող սովորությունները։ Նա իրեն խաբված էր համարում և ասում էր՝

«Տեսնում եմ Հանը միշտ ինձ խաբել է»[1]

և հայհոյանքներ էր ուղղում նրա հասցեին։ Անմիջապես կարգադրություն եղավ ամեն կերպ լրացուցիչ ուղղումներով մոտեցնել օրենքը ժողովրդի ըմբռնմանը և կայսրը ինքը իր վրա վերցրեց այդ իր ցուցմունքի գործադրության վրա անմիջական հսկողությունը։ Այդպիսի մի լրացուցիչ օրենք էր, որ հաստատվեց 1843 թ. սեպտեմբերի 27-ին[2], որը նպատակ ուներ, ինչպես վերը ասվեց, տեղական մելիքների, բեկերի և աղալարների փորձառությունից և ազդեցությունից օգտվելով՝ բարձրացնել ռուսական պաշտոնեության հեղինակությունը և ավելի ճկուն դարձնել նոր ստեղծված վարչական ապարատը։ Այդ փորձը սակայն շնչին արդյունք ունեցավ։ Զանգեզուրում Գորիսի նախկին կառավարիչ մելիք Յարությունը վրդովված հետ մղեց գյուղում ժողովրդի

---

[1] Записки гр. Корфа, «Русская старина», январь, 1900 г., стр. 46—47.

[2] «Второе полное Собрание законов». Дополнение к т. XVIII, № 171856.